ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

« » _____ 2014թ. ք. ԵՐԵՎԱՆ N _____

«ՀՀ ԿԱ ԱԱԾ – ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1 - ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով

էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի հրավեր

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով էլեկտրոնային շրջանակային ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Ապրանքների մատուցման պայմաններն են՝ ք. Երևան:

Հայտնում ենք Ձեզ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել armeps.am համակարգով՝ մինչև **2014թ. սեպտեմբերի 23 -ը, ժամը 11 ^{00}-ն:**

Հայտերը կբացվեն armeps.am համակարգում՝ **2014թ. սեպտեմբերի 23-ը, ժամը 11^{00}-ն:** Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը **/Հավելված** 1/ և գնային առաջարկը **/Հավելված** 2/: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **սույն հրավերով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով** սահմանված կարգով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկություններ ստանալու համար դիմել հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Բաբայանին /հեռ. 579-599/:

Առդիր՝ 22 թերթից:

Հարգանքով՝
ՊԵՏ՝ **Մ. Ղարաջյան**

Հավելված 1

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ ԿԱ ԱԱԾ տնտեսական վարչության կողմից **«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2»**ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին /չափաբաժիններին/ և հրավերի /ծանուցման/
Չափաբաժնի /չափաբաժինների/ համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1/ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2/ համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված2

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով

ընթացակարգի հրավերի

«ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-14/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերը /ծանուցումը/, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____*-ն*

Ընթացակարգի Մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ միավորի գների՝

Չափ-րի հ/հ	Գնման առարկայի անվանումը	Արժեքի հաշվարկ		Առաջարկված միավորի գինը ԱԱՀ-ով /թվերով և տառերով/	Առաջարկված միավորի գինը առանց ԱԱՀ-ի /թվերով և տառերով/	Քանակը	Գումարը
		Արժեք*	ԱԱՀ-ն**				
1	2	3	4	5=3+4	6=3	7	8=5x7
1	1-ին տեսակի ցորենի ալյուր						
2	մակարոնեղեն						
3	բրինձ						
4	հնդկաձավար						
5	ցորենաձավար						
6	հաճարաձավար						
7	ոսպ						
8	սիսեռ						
9	ոլոռ						
10	լոբի						
11	տավարի մսի պահածո						
12	պահածո ձկան, տոմատի սոուսով						
13	մարգարին						
14	Կարագ սերուցքային						
15	խտացրած կաթ						
16	ձու, 01 կարգ						
17	շաքարավազ						
18	դափնետերև, չորացրած						
19	մանանեխ						
20	տաքդեղ քաղցր						
21	քացախ, խնձորի						
22	մշակված կարտոֆիլ						
23	կաղամբ						
24	գազար						

25	բազուկ						
26	լուցկիներ						
27	ծխախոտ, առանց ֆիլտրի						
28	պտղաշաքարի օշարակ						
29	խմորիչ/դրոժ/						
30	մանդարին						
31	Խնձոր, միջին չափի						
32	երշիկ, կիսաապխտած						
33	քաղցր թխվածքաբլիթներ						
34	մրգային մածուկներ						
35	չոր կեր						
36	Տավարի միս, տեղական ոսկրոտ						
37	կոնֆետ, շոկոլադապատ						
38	Կոնֆետ, կարամել						
39	հրուշակեղեն						

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

**** Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ
N ԱՊՁԲ - 11/ -2014

ք. Երևան **«-----» ---------- 2014թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _____ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն _____ _____ -ի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի **Սննդամթերք** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և շարունակվում է մինչև 2014 թ-ի սեպտեմբերի 30-ը:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին՝ ք. Երևան, Այվազովսկու 5-րդ նրբ. հասցեով:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանց, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկակաան բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Ջննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ _____ _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր Ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի **N 2 հավելվածում:** Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **N 3 հավելվածով**՝ վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման–ընդունման արձանագրության /այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ **(Հավելված N 4)**:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ 0,05 տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի **N 1 հավելվածով** սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5%-ի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2014թ.:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքների շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները /խնայողություններ/ և /կամ/ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 /չորս/ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱ ծառայություն	_____
ք.Երևան, Նալբանդյան104	_____
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	_____
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	Հ/հ _____
ՀՎՀՀ 01507079	ՀՎՀՀ _____

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

Հավելված 1

«___» _____ 2014թ. կնքված
N _____ գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

Չափ-ի հ/հ	Կոդեր	Ապրանքի անվանումը	Չ/մ	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ	Այլ պահանջներ
1	2	3	4	5	
1	15612160/1/4/3	1-ին տեսակի ցորենի ալյուր	կգ	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%: ՀՍ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
2	15850000/1/4/3	մակարոնեղեն	կգ	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ГОУС 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
3	03211300/1/4/3	բրինձ	կգ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
4	15616000/1/4/3	հնդկաձավար	կգ	Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի,	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %

				հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	
5	15617000/1/4/3	ցորենաձավար	կգ	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,“Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
6	15619000/1/4/3	հաճարաձավար	կգ	Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
7	15331153/1/4/3	ոսպ	կգ	Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
8	15331152/1/4/3	սիսեռ	կգ	Սիսեռ ԳՕՍՏ 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0)	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %

				% ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: :	
9	15331154/1/4/3	ոլոռ	կգ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
10	15331151/1/4/3	լոբի	կգ	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
11	15131630/1/4/3	տավարի մսի պահածո	կգ	Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիութայն ժամկետը ոչ պակաս քան 90 %
12	15235200/1/4/3	պահածո ձկան, տոմատի սոուսով	կգ	Ձկան զանգվածային մասը 75 %, յուղի զանգվածային մասը 10 %: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 70 %: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 % 240 /նետտո/ - գրամանոց մետաղական տարաներով
13	15431100/1/4/3	մարգարին	կգ	Բուտերբրոդային տեսակի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 % 500 - գրամանոց փաթեթավորմամբ
14	15530000/1/4/3	Կարագ սերուցքային	կգ	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

				կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված	
15	15511600/1/4/3	խտացրած կաթ	կգ	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
16	03142510/1/4/2	ձու, 01 կարգ	հատ	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
17	15831000/1/4/3	շաքարավազ	կգ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել,	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %

				ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	
18	15872310/1/4/3	դափնետերև, չորացրած	կգ	Չորացրած դափնետերև, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
19	15871250/1/4/3	մանանեխ	կգ	Սննդում օգտագործվող համային հավելույթ: Անվտանգությունը ՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 %	Մանանեխի փոշի, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
20	15331171/1/4/3	տաքդեղ քաղցր	կգ	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
21	15871110/1/4/3	քացախ, խնձորի	կգ	Քացախ խնձորի, պատրաստված թարմ խնձորից, թույլատրվող թթուների զանգվածային մասը՝ 4,0 %, մնացորդային սպիրտի ծավալը 0,3 %: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝"Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
22	15313000/1/4/3	մշակված կարտոֆիլ	կգ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

				Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	
23	03221410/1/4/3	կաղամբ	կգ	Թարմ գլուխկաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Թարմ գլուխկաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքինտեսքը՝ գլուխներըթարմ, ամբողջական, մաքուր,առողջ, լիովին ձևավորված, առանցհիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահաս կաղամբը՝ տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

				կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀօրենքի 8-րդ հոդվածի:	
24	15331164/1/4/3	գազար	կգ	Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
25	15331163/1/4/3	բազուկ	կգ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
26	39225300/1/4/5	լուցկիներ	տուփ	Լուցկի տուփով կենցաղային՝ առաջին (4/4), երկրորդ (7/8), երրորդ (3/4), չորրորդ (2/3), հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ տնտեսական ձևաչափերի տուփով, տուփի եզրաչափքերը՝ (56,0X37,5X18,5) մմ, (50,5X37,5X16,5) մմ (110, 0X74,0X37,0) մմ լուցկու հատիկների չափերը՝ երկարությունը՝ 42,5 մմ հաստությունը՝ 1,6-2,2 մմ, տուփում լուցկու հատիկների քանակը՝ 60, 70 հատ ըստ ԳOUS 1820-85 կամ համարժեք Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
27	15991320/1/4/5	ծխախոտ, առանց ֆիլտրի	տուփ/ 20 հատ	Սիգարետներ առանց ֆիլտրի (նիկոտինը՝ 1,3 մգ/սիգ, խեժը՝ 16 մգ/սիգ, սիգարետի ծխում), խոնավությունը՝ (11-15) %, փոշու առկայությունը՝ 3,5 %-ից ոչ ավել, անվտանգությունը և մակնշումը՝ ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 28-ի N 540-Ն որոշմամբ «Ծխախոտի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %

				վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի»:	
28	15622322/1/4/3	պտղաշաքարի օշարակ	կգ	Օշարակներ ըստ արտաքին տեսքի թափանցիկ և ոչ թափանցիկ, ըստ օգտագործված հումքի՝ պտղահատապտղային հումքով, բուսական հումքով, արոմատիկ հումքով (էսենցիայի, եթերայուղերի, ցիտրուսային թուրմերի և այլնի) և հատուկ նշանակման, ըստ ԳՕՍՏ 28499-90, անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 90 %	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
29	15898000/1/4/3	խմորիչ/դրոժ/	կգ	Չոր, գործարանային փաթեթավորված, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 %	Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 %
30	15332191/1/4/3	մանդարին	կգ	Մանդարին թարմ, I պտղաբանական խմբի, դեղին կեղևով և պտղամսով, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխ. կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
31	15332140/1/4/3	Խնձոր, միջին չափի	կգ	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
32	15131122/1/4/3	երշիկ, կիսաապխտած	կգ	Երշիկ կիսաապխտած՝ պատրաստված տավարի և խոզի մսից, խոնավությունը ոչ ավելի քան 45%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

				ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված “Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	
33	15821200/1/4/3	քաղցր թխվածքաբլիթներ	կգ	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված խոնավությունը՝ 3-10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20-27%, յուղայնությունը՝ 3-30%: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
34	15332250/1/4/3	մրգային մածուկներ	կգ	Պովիդլո, տարբեր մրգերից և հատապտուղներից, պաստերացված, բարձր տեսակի, ապակե կամ մետաղյա տարաներով, ԳՕՍՏ 6929-88: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 անիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 %	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
35	15712000/1/4/3	չոր կեր	կգ	Կորեկածավար, առաջին տեսակի, պատրաստված կորեկից, խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, աղբային խառնուկները (0,3-0,4) %, մակնշումը, փաթեթավորումը, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 70 %	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 80 %
36	15111110/1/4/3	Տավարի միս, տեղական ոսկրոտ	կգ	Տավարի կիսամսեղիքով, պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

				որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	
37	15842110/1/4/3	կոնֆետ, շոկոլադապատ	կգ	Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
38	15842310/1/4/3	Կոնֆետ, կարամել	կգ	Կարամելկաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի:	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %
39	15812100/1/4/3	հրուշակեղեն	կգ	Վաֆլի, միջուկով և առանց միջուկի չափածրարված և առանց, ԳOUS14031-68 կամ համարժեք: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90 %

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____

Հ/հ _____
ՀՎՀՀ _____

Հավելված 2
«___» _____ 2014թ. կնքված
N _____ գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

ՀՀ դրամ

Չափ-նի համարը	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2014թ.						Ընդամենը	
				IV եռամսյակ							
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	X		XI		XII		քանակը	գինը
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	1-ին տեսակի ցորենի ալյուր	կգ				12000		48000		60000	
2	մակարոնեղեն	կգ						4000		4000	
3	բրինձ	կգ						2000		2000	
4	հնդկաձավար	կգ						1000		1000	
5	ցորենաձավար	կգ				1000				1000	
6	հաճարաձավար	կգ				1300				1300	
7	ոսպ	կգ						350		350	
8	սիսեռ	կգ						350		350	
9	ոլոռ	կգ						350		350	
10	լոբի	կգ						350		350	
11	տավարի մսի պահածո	կգ						4000		4000	
12	պահածո ձկան, տոմատի սոուսով	կգ						6000		6000	
13	մարգարին	կգ				500		1500		2000	
14	Կարագ սերուցքային	կգ						2000		2000	
15	խտացրած կաթ	կգ						2000		2000	
16	ձու, 01 կարգ	հատ		11160		11160		44640		66960	
17	շաքարավազ	կգ						6000		6000	
18	դափնետերև, չորացրած	կգ						40		40	
19	մանանեխ	կգ						40		40	
20	տաքդեղ քաղցր	կգ						60		60	
21	քացախ, խնձորի	լիտր						100		100	
22	մշակված կարտոֆիլ	կգ		84000						84000	
23	կաղամբ	կգ		2000		16000				18000	
24	գազար	կգ		800		6400				7200	
25	բազուկ	կգ		400		3800				4200	
26	լուցկիներ	տուփ						10000		10000	

27	ծխախոտ, առանց ֆիլտրի	տուփ/ 20 հատ						50000		50000	
28	պտղաշաքարի օշարակ	կգ				600		1600		2200	
29	խմորիչ/դրոժ/	կգ		100				300		400	
30	մանդարին	կգ						700		700	
31	Խնձոր, միջին չափի	կգ						700		700	
32	երշիկ, կիսաապխտած	կգ		400		400		800		1600	
33	քաղցր թխվածքաբլիթներ	կգ		200		300		1300		1800	
34	մրգային մածուկներ	կգ						1000		1000	
35	չոր կեր	կգ						2000		2000	
36	Տավարի միս, տեղական ոսկրոտ	կգ						2000		2000	
37	կոնֆետ, շոկոլադապատ	կգ						600		600	
38	Կոնֆետ, կարամել	կգ						400		400	
39	հրուշակեղեն	կգ						300		300	
Ընդամենը				X		X		X		X	

Ծանոթություն՝ Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____

Հ/հ _____
ՀՎՀՀ _____

Հավելված N 3
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ապրանքների գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում	
		IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1	1-ին տեսակի ցորենի ալյուր	100%	100%
2	մակարոնեղեն	100%	100%
3	բրինձ	100%	100%
4	հնդկաձավար	100%	100%
5	ցորենաձավար	100%	100%
6	հաճարաձավար	100%	100%
7	ոսպ	100%	100%
8	սիսեռ	100%	100%
9	ոլոռ	100%	100%
10	լոբի	100%	100%
11	տավարի մսի պահածո	100%	100%
12	պահածո ձկան, տոմատի սոուսով	100%	100%
13	մարգարին	100%	100%
14	Կարագ սերուցքային	100%	100%
15	խտացրած կաթ	100%	100%
16	ձու, 01 կարգ	100%	100%
17	շաքարավազ	100%	100%
18	դափնետերև, չորացրած	100%	100%
19	մանանեխ	100%	100%
20	տաքդեղ քաղցր	100%	100%
21	քացախ, խնձորի	100%	100%

22	մշակված կարտոֆիլ	100%	100%
23	կաղամբ	100%	100%
24	գազար	100%	100%
25	բազուկ	100%	100%
26	լուցկիներ	100%	100%
27	ծխախոտ, առանց ֆիլտրի	100%	100%
28	պտղաշաքարի օշարակ	100%	100%
29	խմորիչ/դրոժ/	100%	100%
30	մանդարին	100%	100%
31	Խնձոր, միջին չափի	100%	100%
32	երշիկ, կիսաապխտած	100%	100%
33	քաղցր թխվածքաբլիթներ	100%	100%
34	մրգային մածուկներ	100%	100%
35	չոր կեր	100%	100%
36	Տավարի միս, տեղական ոսկրոտ	100%	100%
37	կոնֆետ, շոկոլադապատ	100%	100%
38	Կոնֆետ, կարամել	100%	100%
39	հրուշակեղեն	100%	100%

* ***Վճարումն կիրականացվի համաձայն գնման ժամանակացույցի:***

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱ ծառայություն
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____

Հ/հ _____
ՀՎՀՀ _____

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
,N _____ *ապրանքների գնման պայմանագրի*

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.